ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 473
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Զառիթափ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Վայք համայնքի (Զառիթափ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Զառիթափ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Զառիթափ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
10-022-0238-0046 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով հողամասից 0.044 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	10-022-0238-0046 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով հողամասից 0.044 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից նշված պայմանը (կցվում է),

4. Վայք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զառիթափ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Զառիթափ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «2» «դեկտեմբերի» 2024 թ.